








1-24



Հ. Կ. Կ. Կ. Կ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 1

Պրակտիկական բոլոր յերկրների, միացե՛ք


336.2 (-22)

ՅԵ. ՉՈՒԲԱՐ

ՍՏՈՒԳԼԱՄ Է 1961 թ.

ԻՆՉՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆ ՀԱՐԿ
ՊԻՏԻ ՏԱ

29359



ՅԵՐԵՎԱՆ

1924

A $\frac{1}{1711}$

ՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

4152

1553-201

ԳՅՈՒՂԱՅՈՒ ՍՈՒՏ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Գյուղացի ընկեր, շուտով դու հարկ պիտի
տեսաս Սորհրդային կառավարութեանը: Տարվա
աշխատածից Բանվորա-Գյուղացիական կառա-
վարութեանը բաժին պիտի հանես:

Կան մարդիկ, վոր սև սատանի նման ձեր
աղանջներին փսփսում են՝ ու ասում:

— Մեզ լսեք, բաղնիկները ձեր հալալ աշ-
խատածը թալնում են, յեկեք խոսք մեկ արեք՝
հարկ միք տա:

Գյուղացի ընկերներ, ես վոր ձեզ պատ-
մում եմ, հեքիսթ չի: Ինքներդ ինձնից լավ գի-
տեք, վոր ձեր աղանջին եղպես անուշ վրա-
փաստող մարդիկ կան գյուղում, մենակ իհար-
կե դրանք սև սատանաներ չեն: զրանք Սոր-
հրդային իշխանութեան թշնամիներն են:

Դրանք, վրաներից վոր նայես՝ վոչինչ, ան-
մեղ մարդիկ են: չեն ասում թե Սորհրդային
իշխանութեան հարկավոր չե, վոր իրանց հարց-
նես՝ գյուղացու ամենաառաջին բարի կամե-
ցողն են: Յեվ հենց եդ պատճառով ել հակա-
ռակ են, վոր: Սորհրդային կառավարութեանը
գյուղացուց հարկ վերցնի:

Գյուղացիներ, յեկեք ձեր եղ բարեկամներ-
 թի, ձեզ բարի խորհուրդ տվող մարդկանց եղ
 խոսքից բռնենք գնանք ու տեսնենք ինչ դուրս
 կգա ձեզ համար՝ լավություն թե վատություն:
 Յես ասեմ վատություն, դուք ասեք՝ լավու-
 թյուն: Տեսնենք, կարելի՞ յե խորհրդային իշխա-
 նություն ուզել և եղ խորհրդային իշխանու-
 թյանը հարկ չտալ:

ԳՅՈՒՂԱՅԻՆ ՍԻՇՏ ԵՆ ՀԱՐԿ ՏՎԵԼ Ե

Հո ես խոսքիս դեմ բան չեք կարող ասել-
 դուք ինքներդ, ձեր հայրերը, ձեր պապերն ու
 նրանց հայրերը՝ բոլորն ել աչքերը բաց են ա-
 րել ու տեսել են, վոր կառավարութիւնը հարկ
 ե վերցնում. փոխվել են միայն հարկ վերցնող
 կառավարութիւնները, մեկ ել փոխվել ե ինքը
 հարկի տեսակը: Խոսքի համար ասենք առաջ
 պարսիկ խաները ու սաճիկ գալմագամներն են
 հարկ հավաքել՝ իսկ հետո ռուսաց թագավորն ե
 յեկել՝ նրան եք հարկ տվել: Վճնց կարող եյիք
 չտալ: Աթաղան բաբաղան տալիս եյիք, կարծում
 եյիք, վոր հարկն ել կարկուտի ու յերաշտի նը-
 ման աստծու տված պատիժ ե: Հարկ վոր չտա-
 յիք, բա վճնց պիտի ապրեյին ու քեֆ բաշեյին
 շահերն ու սուլթանները, թագավորներն ու գե-

Պետրաւները. վոր հարկը, կոռն ու բեղյառը չը
 զիներ՝ վոնց պիտի պահեյին են իրենց զորքն ու
 չինովնիկներին: Շատ եւ ասում եյի, վոր թա-
 գավորի յերկնքից ե նշանակված, հո թագավորի
 խազնան եւ յերկնքից չէր լցվում: Պյուղացին
 եր լցնում եդ խազնեն՝ իր դառը քրտինքով, հա-
 լալ աշխատանքով

ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՀԱՐԿԸ

Ձեզնից շատերն ասում են, վոր դաշնակ-
 ցական կառավարությունը գյուղացիներից
 հարկ չէր վերցնում, իսկ բալդեիկներն ամեն
 տարի աշունքը վոր գալիս ե՝ գլխիդ կանգնած
 են, թե՛ հարկը տո՛ւր: Եդպես են փափսում ձեր
 ականջին գյուղերում՝ հլա շունչները չփչած
 դաշնակաները:

Ճիշտ ե արդյոք դրանց խոսքը:

Ճիշտը են ե, վոր դաշնակցականների կա-
 րավարությունը սկի կառավարություն եւ չէր.
 դա խմբապետների մի կոմիտե եր, վոր յիւրեք
 տարի նստեց Հայաստանի ժողովրդի գլխին, վոչ
 ինքը կռիւներից աչքը կարողացավ բանալ, վոչ
 եւ ժողովրդի գլխին խելք թողեց:

Են, վոր դաշնակցականներն անկախ Հա-
 ղաստան եյին ասում՝ հո գիտեք, հալար ընկած
 մի յերկիր եր, շունք տիրոջը չէր ճանաչում.

ով հասնում եր, վրա եր տալիս, ում հասնում
եյին՝ վրա եյին տալիս:

Ո՞վ գլուխ ուներ՝ նստելու, հաշվելու թե
Հայաստանում քանի գյուղ կա, քանի ծուխ,
ամեն մի ծուխ ինչ ե տալիս, ո՞վ եր իմանում,
թե կառավարության ինչքան հաց ու փող ե
հարկավոր կամ վարտեղից, ինչպես պիտի գուրա-
զա եղ փողն ու հացը:

Դաշնակները պետություն չունեյին: Բայց
գրանից հեշ չեր թեթևանում գյուղացու դրու-
թյունը. ով վրա հասներ՝ կթալներ գյուղա-
ցուն, են ել աշխատավոր գյուղացուն. թալա-
նում եր գյուղի գործեն ու մատուցերիստը, թա-
լանում եր աֆիցերն ու գինվորը, թալանում
եր խմբապետը, թալանում եյին իրենք միմիա-
տրըները: Ասում եյին, վոր եղ թալանը հայրե-
նիքի պ շտպանության համար ե. ով թալանի
դեմ բերան եր բացում՝ նրա վրա մատուցի
բերանն եյին բաց անում ու հաշիվը շուտ եր
վերջանում: Մի կողմ թողնենք ես թալանը. քիչ
ե պատահել, վոր դաշնակցական լիազորները
կառավարության անունից գործի և հայրենիքի
համար ե ասելով՝ հաց ու տավար հավաքեն
գյուղացիներից: Ես ամենը ի հարկե հարկ չե-
վորովհետև հարկ վոր ասում են՝ մարդ ասկա-
նում ե թե ումից ե վերցնում, ումից ինչքան

ե վերցնում, ինչից ե վերցնում, յերբ ե վերցնում,
 վերջապես նվ ե վերցնում: Այդ բոլորը չկար դաշ-
 նակների ժամանակ, բայց միթե դաշնակներ
 թալանն ավելի եծան եր նստում հայ գյուղա-
 ցուն, քան թորհրդային իշխանության դրած հարկը:

Մի կողմ թողնենք հացի ու տավարի, յու-
 ղի ու պանրի հարկը: Բա դուք մոռացել եք
 դաշնակների են ամենամեծ հարկը: Միթե մո-
 ռացել եք արյունի են սև հարկը, վոր դաշնակ-
 ները ամեն որ, ամեն ամիս ու ամեն տարի
 բոլ-բոլ վերցնում եյին ձեզնից, հայ գյուղա-
 ցի եր:

Են վոր ենքան անխառն կռիվներ յեղան,
 են վոր ենքան ջահել-ջիվան կյանքեր գնացին
 կորան ձեր աներից, սև հողին մատաղ գնացին՝
 եդ ամենը վոր ձեր ուժը կտրեց, ձեր բանուկ
 ձեռները չորացրեց, ձեր ոջախի ծուխը մարեց,
 եդ բոլորը հարկ չեր, բա ի՞նչ եր: Եդ բոլորից
 բեղարեւոց չէր, վոր դուք սկսեցիք յերանի տալ
 թագավորի ժամանակները: Ջրից պրծել կրակն
 եյինք ընկել և ուղում ելինք նորից ջուրն ընկ-
 նել, և ելի կնկնեյինք թագավորի ջրերը՝ յեթե
 բալշիկներն ու կարմիր բանակը դաշնակների
 շինքին չտային, չքշեյին, յեթե բալշիկներն ու
 կարմիր բանակը ձեր թևից չբռնեյին ու վոտի
 չկանգնացնեյին:

ԻՆՁ Ե ԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

Այ, ես դուք գյուղացիներ, ես ել Խորհրդա-
յային իշխանությունը. ինչ վոր ունեք սրտնե-
րումդ՝ յերեսին ասեք: Ի՞նչ ե հարկավոր ձեզ,
ռանչալար հողագործներիդ. խաղաղություն:
Խորհրդային իշխանությունը տվել ե եդ խա-
ղաղությունը, պահպանում ե եդ խաղաղու-
թյունը: Ել ի՞նչ եք ուզում: Ձեր գլխի տեր ու
պահապան զո՞րք եք ուզում: Եդ ել ունի Խոր-
հրդային իշխանությունը: Կարմիր բանակը ձեզ
դուրբան, արթուն պահապան. ես ել վո՞չ միայն
Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակը, այլ
և Ռուսաց Մեծ Կարմիր բանակը:

Արդար դատ ու դատաստան եք ուզում:
Հապա մի լավ ծանր ու թեթև արեք, հիշեցեք
հին դատարանը ու ինքներդ ել կխոստովանեք,
վոր Խորհրդային դատարանի նման արդար ու
շուտ դատաստան տեսնող դատարան չեք տեսել
վո՞չ Թագավորի վո՞չ ել դաշնակների ժամանակ:

Դուք ձեր պապերի նման խավարի ծնունդ
ու խավարի սլաշապան չեք, դուք ուզում եք,
վոր ձեր յերեխեքը ուսումի, գիտության տեր
դառնան: Ձեռքներդ խղճերիդ դրեք ու խոստո-
վանեցեք, վոր Խորհրդային իշխանությունը վո՞չ
միայն ձեր խնդրելով, այլ շատ անգամ զուռով

աւսում եւ տալիս ձեր գալականերին: Լավ իմացեք, վոր Խորհրդային կառավարութեան դանձարանի (խազնայի) ծախսերի կեսից ավելին ժողովուրդը լուսավորելու համար եւ ծախսվում:

Ձեր հոգից ավելի շատ բերք, ավելի շատ ագուտ ստանալ եք ուզում: Խորհրդային իշխանութեանն ել հենց եդ եւ ուզում: Նա շատ բան արել եւ ու դեռ շատ բան պիտի անի, վոր եդ նպատակին հասնեք:

Են մեծ ջրանցքներն ու առուները, Վաղարշապատի, Շիրակի, Եվջիլարի առուները, վոր Խորհրդային իշխանութեանը փորեց, ինչո՞ւ համար են. քանի-քանի հազար դէսյատին հող ավելացրեցին եդ ջրանցքները. հիմա ել ճահիճներն եւ չորացնում Խորհրդային իշխանութեանը, վոր պետքական հողերը շատանան:

Հողի բերքը շատացնելու, ձեր աշխատանքը թեթեւացնելու համար հլա շատ ժամանակ, աշխատանք ու փող եւ հարկավոր: Պակաս բան կլինեն, յեթե ամեն մի գյուղ մի գիտուն հողագետ (ագրոնոմ) ունենար, վոր ամեն ժամ հողագործի կողքին լիներ, հողի, վարի ու ցանքսի լավն ու վատը հասկացներ, վատից հեռացներ, լավը սովորեցներ:

Ել ի՞նչ պակասութեանն ունի գյուղը: Հիվանդանոց, ճար ու բժիշկ քիչ եւ: Խորհրդային իշխա-

նության՝ գործերից մեկն ել եղ ե, վոր ժողովուրդն առողջ լինի: Քիչ աշխատանք ե թափում Սորհրդային իշխանությունը դրա համար: Ուրիշ տեղեր չեմ ասի, բայց տեսած կամ լսած կլինեք, ուր վոր ջերմ դողերոցք շատ կա, եղ բոլոր տեղերում կառավարությունը հատուկ հիվանդանոցներ ե պահում, բժշկ, խինին ուղարկում, մի կողմից ել ճանիճներն ե չորացնում՝ հո գիտե՞ք վոր դողերոցքի բուժը ճանիճներն են: Ուրիշ տեղերումն ել հիվանդանոցներ ե բանում Սորհրդային կառավարությունը: Քեռ շատ հիվանդանոց ու բժիշկ ե հարկավոր, վոր ժողովրդի առողջությունը տեղը լինի: Եստեղ ել Սորհրդային կառավարության, չե՛ թե ցանկությունն ե պակասում, այլ փողը:

ԻՆՁՈՒ ՀԱՄԱՐ Ե ՀԱՐԿԸ

Հավ, ինչո՞ւ եսքան լավություն ե անում ու հլա դեռ ուղում ե անել Սորհրդային կառավարությունը գյուղացիության համար: Չլի՞ գյուղացու սիրտը շահելու համար ե ես ամենը: Չլի՞ ես ամեն անուշ խոսքերս նրա համար են վոր խաբվեք՝ հարկ տաք: Ելի ծուռ հասե՞նք՝ գուղ խոսենք. սուր չե, վոր ձեր մեջ եղպեամտածողներ ել կան թե՛ լավ եք ըլլացնում, բայց վաղը պիտի գաք հարկ վերցնեք:

Եղպեա մտածողներն առաջ հլա ինձ պիտի հասկացնեն, վոր քիչ առաջ իմ ասածներս Խորհրդային իշխանության արած գործերի մասին՝ սուտ ե. ում լեզուն շուռ կգա ասելու, թե իմ բոլոր ասածները Խորհրդային իշխանությունը չի արել և կամ եդ բոլորից գյուղացին ոգուտ չունի: Եդ վոչ վոր չի կարող ասել. հիմա արդեն ոձի կաթ ծծած դաշնակներն ել չեն համարձակվում եդ խոսքերն ասել:

Դա վոր եղպեա ե, հասլա մի մտածեք թե են կարմիր Բանակի պահելու, են ջրանցքներն անցկացնելու, են դպրոցներն ու հիվանդանոցները շինելու, վարժապետներ, դատավորներ պահելու համար Խորհրդային կառավարությունը փողը վճարտեղից ե ճարում, կամ վճարտեղից պիտի վերցնի:

ՈՒՐՈՇԻՑ ՀՈՒՅՍ ԶԿԱ

Բալչևիկները հո եդ փողը Աստծուց չեն վերցնում: Մեկ՝ վոր բալչևիկներն ասում են, վոր աստված չկա. վոր ինքը չկա՝ փողն ել չկա. յեթե լինելը ել եդ աստվածը՝ անհավատ բալչևիկներին փող չեր տա: Ասենք՝ աստված նույնիսկ իրենին ծառայող կաթողիկոսներին, վարդապետներին ու տերոտերներին, իրա սուրբ տները՝ վանքերն ու յեկեղեցիներն ել չի պահում, եդ բո-

1. որի ծախսը ժողովրդի շինքին եր գցում: Աս-
 արծուց խեր չկա: Չին՞ դաշնականերից մի խեր
 լինի, չին՞ նրանցից մի ոգնություն գա Սոր-
 հըրդային իշխանությանը: Խուրջիններդ լեն բաց
 արեք, վոր տեղ անի: Դաշնակաները Սորհրդա-
 յին իշխանության դատարկ գանձարան (խաղ-
 նա) թողին և ավերված յերկիր: Հիմա վոր իմ
 քոռ պասլն ել գիտե, թե Սորհրդային իշխանու-
 թյունը Հայաստանը շինում-շենացնում ե՞ դաշ-
 նականերն ել խելոքություն են բանեցնում ու
 ասում են, վոր իրենք ել սլիտի ոգնեն Հայաս-
 տանի ժողովրդին: Վճռաբեղից, ինչպես: Լավ ե
 իրենց գլուխները պահեն իրենց ունեցած փո-
 ղով ու մեկ ել Սորհրդային հայաթից հեռու
 մնան: Դաշնակի հացի մեջ մի քար կլինի պահ-
 ված Սորհրդային իշխանության համար: Իսկ
 դու գյուղացի, կուզե՞ս, վոր դաշնակի քարը
 Սորհրդային իշխանության մեջքին կպչի, իսկ
 դու գյուղացի կուզե՞ս, վոր քո և Սորհրդային իշ-
 խանության աշխատանքը դաշնակաները խառնեն:
 Կուզե՞ս վոր ելի յերկիրը իրար խառնվի:

Յերկրից դուրս, արտասահմանում, շատ հայ
 հարուստներ կտականեր են արել Հայաստանի հա-
 մար. եղ կտակաները մի քանի միլիոնի կհասնեն:
 Հայ հարուստները հիմա ուզում են եղ կտակած
 փողերը Սորհրդային Հայաստանի կառավարու-

Թյանը տալ: Խորհրդային կառավարյալութունը չե-
չի ասի, կվերցնի եղ փողերը: Բայց մինչև այս-
որ Ամերիկայի և Յեվրոպայի հայ հարստու-
ները միայն խոստանում են, նաղղի վրա հլա-
փող չի յերեվում: Հ, չէ՞նք կարող սպասել: Եղ
փողերը վարքան ել լինեն, շատ շատ մի յերկու
յերեք տարվա բավականանա:

Տեսնո՞ւմ եք, վոր վոչ ասածուզ, վոչ դաշ-
նակից, վոչ ել հայ արստից հույս չկա: Մնում
ենք մեջ տեղը մենք՝ յեռ, դու, Մինասը, Կարոն,
Ծովոն, մնում ենք մենք ու մեր երկիրը:
Տղամա դ ես՝ գլխիդ ճարը տես, յերկիդ կա-
ռավարի, թե չե՞ դաշնակր կգա ու իր գիտցածի-
պես կառավա ի, վոր յոթը պորտդ չի մոռանա:

Տեսնո՞ւմ եք, վոր ւրիշ հնար չ ա մենք
մեզ պի ի պահենք, մենք պիտի տանք են փո-
ղերը, վոր հարյավոր են Խորհրդային կառավա-
վարությանը ծախսերը հոգալու համար: Տեսանք,
վոր եղ ծախսերը ժողովրդի, Խորհրդային հայ
րենիք, ոգտ համար ե ուրեմն Խորհրդային
հայրենիքի բոլոր բակ շներն ել պիտի բաժնե
հանեն իրենց կառավ րութ անը: Եղ բաժինը
հարկն ե:

Բայց ինչո՞ւ գյուղացին պիտի տա հարկը-
եղ ինչ գյուղացիական կառավարւթյուն ե,
վոր գյուղացուց հարկ վե ցնի: Այսպես են ա-
սում դաշնակները: Շատ պարզ ե թե ինչու:

Հայտնի է, վոր Խորհրդային կառավարութ-
յունը հարկ վերցնում է վոչ միայն գյուղացի-
ներից, այլև քաղաքի խանութպաններից. հար-
ցոքը դուքանչիներին. նրանք շատ շավ գիտեն
խորհրդային հարկի համն ու հոքը: Ես մեկ յերկ-
րորդը են, վոր մենակ խանութասպաններից հարկ
վերցնելով՝ յերկիր չի կառավարվի. մեր ժ դո-
վրդի մեծ մասը գյուղացիներ են: Յեվ վերջա-
պես ով և ասել, վոր գյուղացու կառավարու-
թյունը գյուղացուց հարկ վերցնելու իր վունք
չունի: Եդ ինչո՞ւ բուրժուաների կառավարու-
թյունը բուրժուաններից հարկ վերցնում էր.
ինչո՞ւ բուրժուաները կարող էին իրենց կառա-
վարության ծախսերի մեկ մասը հոգալ. իսկ
գյուղացին իր գյուղացիական կառավարության
համար հարկ չպիտի տա:

Բուրժուաների կառավարությունը բուր-
ժուաններից էլ, գյուղացիներից էլ հարկ էր վեր-
ցնում. բուրժուաններից քիչ էր վերցնում,
գյուղացիներից շատ: Բայց բուրժուական կա-
ռավարության՝ նրա որենքների, նրա դորքի,
պալիցիայի գործերը բոլորն էլ աշխատավորների
դեմ էյին: Իսկ են հարկը, վոր գյուղացին Խոր-
հրդային խանությանն է տալիս՝ էլի իր գյու-
ղացու լավին է ծառայում. ետ հարկով է ապ-
րում կարմիր Բանակը, եդ հարկով են կատար-

վում խորհրդային իշխանության բոլոր մեծ
գործերը, պահվում են գալրոցներ, հիմնականոց-
ներ, ճանապարհներ, գատարաններ, և այլն:

Եւ բոլորը, վոր լավ հասկանա, ամեն գյու-
ղացի եւ կասի, վոր հարկը պիտի տալ: Յերբ
մարդ հասկանում ե, վոր հարկը իրեն պետքա-
կան գործի համար ե ծառայելու՝ նա կասի. եթե
հարկն ինձնից վերցնողը ոտար չե՝ այլ իմ կա-
ռավարությունն ե: Կամավոր տամ, առանց գո-
ռի, առանց ահ ու վախի:

Ով հասկացել ե իր ոգուտը խորհրդային
իշխանությունից՝ նա կտա գյուղատնտեսական
հարկը:

Գյուղատնտեսական հարկի դեմ խոսողը,
գյուղատնտեսական հարկ չտվողը՝ խորհրդային
իշխանության թշնամի ե: Հեռու քշեցեք ձեզա-
նից գյուղատնտեսական հարկի դեմ խոսողներին:

Յե. Չուբար

29359
A
H
1511



✓[-024.]

556-2

9-81

Utility apparently

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035754

A $\frac{1}{1211}$